

տոյ » բացատրութիւնը՝ քան Ղ. Փարպեցիի վեց անգամ կրկնածը. «Թէպէտ զձեռնադրութիւն երիցութեան ունէր այլ զկաթողիկոսութեան զաթոռն ունէր Հայոց ի ժամանակին»։ որու մասին կարծես ինքն ալ կը տարակուսի եւ իր ընթերցողին կասկածն ալ փարատելու համար կ'ըսէ անգամ մըն ալ. « զարդարեւ կաթողիկոսն Հայոց »:

Ուստի կրնանք եզրակացնել թէ Եղիշէ այս խնդրին մէջ ալ շատ աւելի տեղեակ է եւ աւելի մօտ ապրած դէպքերու քան Փարպեցին՝ որ յիստուն տարի վերջ արձանագրած է պատմութիւնը, երբ շատ փոխ-

ուած էին պարագաները: Եւ թէպէտ Եղիշէ՝ պատմութեան գիրք մը չէ որ գրած է, բայց իր տուած տեղեկութիւնները ցոյց կու տան թէ ինք «օտար մը չէ եւ ո՛չ ալ Հայ շրջանակէն հեռու ապրած» որպէսզի չկարենար գիտնալ Հայ կաթողիկոսին իսկական տիրոջը. այլ ապրած է պատմական այն շրջանին՝ որու մասին կը գրէ եւ շատ լաւ գիտցած է արտայայտել նոյն ժամանակի բացառիկ գիրքի մէջ գտնուող մեր եզակի կաթողիկոսին տիրոջը, իր «Յովսէփ Եպիսկոպոս Այրարատոյ» բացատրութեամբ:

Հ. Պ. ՀԱՄԼԵԱՆ

Ս Ո Ր Ե Ն Ե Ն Յ Ո Յ

Սորբենքոյ, ծաղկաշաղախ, դալարագեղ ավերով,
Երգերըդ շաղ եմ գալիս պայծառ հորիզոններում,
Ալիքներդ եմ վազվզում փրփուր-փրփուր ծափերով,
Գիթարի ձայնն է կաթում քո առափնեայ ջրերում:

Ո՛րքան սէր կայ քո ծոցում ու ո՛րքան երգ՝ քո գրկում,
Քո լանջերում, քո ծովում, քո գեղուն հովերի մէջ,
Աղջիկներիդ սրտերում, տղաներիդ տափ հոգում,
Սորբենքոյ, ջինջ մեղեդի՛, սիրակոհակ, սիրաէջ:

Դու՝ համակ կենսակարկաչ, չփնաղ ու գեղածիծաղ,
Անուրջ ու ցոլփ կայ փռուած ավունքներում քո լուսէ,
Ա՛յնքան շող ունես, արե՛ւ, ու ա՛յնքան խիղճ ու ծիծաղ,
Սորբենքոյ, դու՝ վառ հրմայֆ, Սորբենքոյ, դու՝ երգ ու սէր:

Սորբենքոյ

Դեի

ԲԺՇԿԱԿԱՆ ՏՈՒԵԱԼՆԵՐ ՆԱՐԵԿԱՅ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ՄԷՁ

Մարդկային մարմնին քառասոր կազմը. — Հոգին եւ մարմինը — հոգեվարքն ու դեակնացած մարմինը:

(Շար. Բազմ. 1951. Թիւ 7-8, էջ 156)

Ա.

Նարեկացիին ողբերգութեան մատենանին մէջ, բժշկական գիտելիքներու հետ կապ ունեցող հարցերը, հպանցիկ յիշատակութիւններու կարգին դասուած են:

Հակառակ այդ հանգամանքին, բժշկութիւնը հոն բոյն գտած է իր բազմա-կողմանի ճիւղաւորումներովը, հոգեբանական հարցերու առնթներ:

Այդ կարգի յիշատակութիւններ ցրուած կը գտնենք աղօթամատենին զանազան էջերուն մէջ, ու գրի առնուած են գրական այնպիսի հոգեչունչ ոճով մը, որ գիտական չոր ու ցամաք հարցերը, տաղանդաւոր քնարերգական գրչին տակ, կը կորսնցընեն իրենց անհրապօր հանգամանքը, կը պճնուին իմաստասիրական եւ բանաստեղծական յղացումներու տարազովը, ու կը վերածուին կատարեալ վայելքի մը:

Մարդկային կազմին նուիրուած հատուածը, իր ամբողջութեանը մէջ, այնպիսի՝ հրաշակերտ քանդակ մըն է, որ կրնայ ներշնչման աղբիւր դառնալ նկարիչին եւ արձանագործին, մարդ էակին հոյակապ կերտուածքը իր ամենացայտուն գիծերովը պատկերացնելու համար:

Ահա՛ այդ հատուածը՝ Թորգոմ Սրբազան Գուշակեանի կողմէ աշխարհաբարի վերածուած.

«Կանգնած՝ գեղ կրող երկու ոտներու վրայ, որոնք միաբան եւ համակցորդ են

իրարու, բայց իսկապէս հրեշտակի ձեւով կառուցուած եւ դուն, երկնահայեաց դիրքովդ եւ գոյգ բազուկներու վերամբարձ քեւերովդ...: Բոլորակ գլուխդ, ինչպէս բազմաստեղն քերան փրագի, մարմինիդ աշտանակին վրայ հաստատուեցաւ, որպէսզի տաճարին աշտանակին օրինակին շնորհիւ գլատուած տեսնելէ չը դադրիս, եւ անապական բաներու վրայ խորհիս: Բանականութեան պատիւով կրկնապէս նախացար, որպէսզի քեզի շնորհուած բանաստեղծութեանց գերազանցութիւնը համարձակ լեզուով խօսիս: Ձեռքիդ եւ մատներուդ մեղ մեղ կազմութեամբը՝ արեւստական գործեր յօրինելու սահմանուեցար, ու այդ տեսակէտով, կերպով մը Աստուծոյ ամենաբաշխ աջին մամուլիւնը ունենալով վրադ, աստուած կոչուեցար: Երեւ հարիւր վաթսուն յօդուածներով շաղկապուեցար, աւելի ունենալով տակաւին՝ հինգ զգայարաններու զգայուն մասերը, եւ այս՝ որպէսզի մարմինիդ արտաքին նիւթական կազմութիւնը անիմատ չերեւի մտքիդ. այդ ամէնուն մէջ կան որ խոշոր են եւ գորաւոր, կան որ փոքր են եւ պիտանի, կան որ կարծրակերտ են եւ զգայուն, կան ալ որ կարեկան են եւ ամօքական: Իսկ այս կազմաւորութեան բացատրութիւնը, ո՛վ իմ եղկելի անձս, քու մէջդ նկատուած է արդէն իբրեւ անջրնջելի արձանի մը վրայ, եւ է այս՝ քե՛ ժամանակին ամենափոքր մասը, եւ օրե-